

Բանալի բառեր՝ կլաստեր, միջկազմակերպական փոխգործունեություն, գիտություն, արտադրություն, տնտեսական աճ:

**ՅՏԴ 334:637.1**

## ՀՀ-ՈՒՄ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԿԼԱՍՏԵՐ

### Լիանա ԽԱԶԱՏՐՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու,  
դոցենտ*

*ՀԱԱՀ ագրոքոնոմիկայի կազմակերպման և  
կառավարման ամբիոնի ասիստենտ*

### Լուսինե ԹՈՐՈՍՅԱՆ

*ՀԱԱՀ ուսանողուհի*

Տնտեսագիտության մեջ «կլաստեր» տնտեսական երևույթն առաջին անգամ ներդրվել է ամերիկացի տնտեսագետ Մայքլ Պորտերի կողմից, հետեւյալ՝ The Competitive Advantage of Nations (1990) և On Competition (1998) աշխատություններում: Վերջիններով պայմանավորված՝ նա բնորոշում է կլաստերը՝ որպես աշխարհագրորեն միևնույն տարածաշրջանում կենտրոնացած, միմյանց հետ փոխկապակցված, կազմակերպությունների, մասնագիտացված մատակարարների, ծառայությունների մատուցողների, համապատասխան ոլորտի ֆիրմաների, ինչպես նաև վերջիններիս գործունեության հետ կապակցված կազմակերպությունների (օրինակ՝ համալսարանների, ստանդարտացման գործակալությունների, առևտրային միությունների) մի խումբ՝ որի անդամները չնայած մրցակցում են միմյանց հետ, սակայն իրականացնում են մեկ ընդհանուր աշխատանք<sup>1</sup>: Այս կազմակերպությունները փոխլրացնում են միմյանց և բարձրացնում ինչպես առանձին ձեռնարկությունների, այնպես էլ ողջ կլաստերի մրցակցային առավելությունների մակարդակը:

Կլաստերները նպաստում են տնտեսական աճին, մասնավորապես.

1. ներդրումների ապահովմանը և ընդլայնմանը,
2. տնտեսության պահանջներին համապատասխան ձեռնարկատերերի կրթմանը,
3. փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը,
4. կազմակերպությունների ճկունության և արդյունավետության բարձրացմանը,
5. ենթակառուցվածքների լայն շրջանակի ստեղծմանը:

Սույն կառուցում կարելի է օպտիմալացնել միջկազմակերպական կապերը, հաստատել արդյունավետ կոոպերացիա, համաձայնեցնել տարբեր ոլորտներում գործունեություն իրականացնող բազմաթիվ կազմակերպությունների պլանները: Կլաստերը կարելի է դիտարկել որպես միջկազմակերպական փոխգործունեության կազմակերպման ամենից հեռանկարային ձևաչափերից մեկը, որն ունակ է օպերատիվ կարգով և նորարարությունների կիրառմամբ հարմարեցնել ներքին ենթակառուցվածքներն ու արտաքին կապերը՝ արագորեն զարգացող արտաքին միջավայրի հետ:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կլաստերների նորարարական հնարավորությունները կախված չեն միայն կազմակերպությունների տարածքային կենտրոնացումից, մասնակից ընկերությունների առանձնակի մրցակցային առավելություններից կամ կլաստերին պատկանող կազմակերպության բարձր տեխնոլոգիաների ոլորտի պատկանելության մակարդակից: Այստեղ առկա նորարարական սիներգիան՝ միասին աշխատելու առավելությունը, ապահովում է ինստիտուցիոնալ՝ սոցիալական բարեկեցություն, հանդիսանում է կոլեկտիվ համագործակցության վերջնական արդյունք: Տարածաշրջաններում կլաստերների ձևավորման հնարավորությունների վերլուծություններն ամբողջությամբ հիմնված են գործարար միջավայրի ուսումնասիրության, մրցունակ արտադրության առկայության եւ դրա կառուցվածքի տարբերակման աստիճանի, կազմակերպությունների նորարարական ակտիվության ու բիզնեսի ենթակառուցվածքների ապահովվածության բարելավման վրա:

Եթե առանձնացնենք կլաստերների բնութագրիչ ցուցանիշների ամբողջական համակարգ, ապա այն կբաժանենք հետևյալ հիմնական հատվածների.

1) **Կլաստերի միջավայր:** Ներկայացնում է տարածաշրջանի գործարար միջավայրի ընդհանուր ցուցանիշները, որոնք արտադրական կազմակերպությունների (ձեռնարկությունների) տեղաբաշխվածության համար բնութագրում են տարածքի գրավչությունը:


2) **Կլաստերի շարժիչ ուժեր:** Դրանք ռեսուրսային ցուցանիշներ են, որոնք անհրաժեշտ են կլաստերների ձևավորման համար (օրինակ՝ մարդկային ռեսուրսներ, գիտական նվաճումներ, փոխներգործության կապուղիներ և այլն):

3) **Կլաստերի զարգացում:** Ցուցանիշներ, որոնք բնութագրում են կլաստերավորման ընթացիկ գործընթացները օրինակ՝ ձեռնարկությունների մյուս զանգվածը, որը միտված է համագործակցության, կազմակերպությունների և գիտական հաստատությունների միջև համատեղ նախագծերի առկայությունը և այլն):

4) **Կլաստերի արդյունքներ:** Արդյունքային ցուցանիշներ, որոնք արտացոլում են կլաստերի ազդեցությունը նորարարական ակտիվության վրա, ցանցային փոխազդեցության զարգացման գործընթացները և տարածաշրջանի մրցունակությունն ամբողջությամբ:

<sup>1</sup> А.Я. Якобсон, Т.К. Кириллова, Инновационный менеджмент: Учеб.пособие, 3-е изд., Москва, 2015.

Կլաստերները կարող են լինել տարածաշրջանային և արտադրական: Տարածաշրջանային կլաստերը միանման և փոխկապակցված տնտեսական գործունեության տարածքային ագլոմերացիա է, որը ձևավորում է տարածաշրջանի ներքին ու արտաքին միջավայրերը, նպաստում է գիտելիքի հոսքին, խթանում է ուսուցման և հարմարվողականության (ադապտացիայի) տարատեսակ ձևաչափերը: Նմանօրինակ կլաստերները սովորաբար կազմված են փոքր և միջին ձեռնարկություններից, որոնց կապում է միևնույն աշխարհագրական տեղադրությունը: Արտադրական կլաստերն աշխարհագրորեն մոտ տեղակայված տնտեսական գործունեության նորարար և ակտիվ սուբյեկտների համախումբ է, որի անդամներն ունեն մոտիվացված և դիմացկուն կոոպերացիոն հարաբերություններ: Արտադրական կլաստերն ապահովում է արտադրանքի հումքի ստացում, արտադրություն, իրացում: Արտադրական կլաստերն ի տարբերություն տարածաշրջանային կլաստերի՝ ունի առավել լայն սահմաններ, կարող է ներգրավել իր մեջ կազմակերպություններ՝ նույն կամ այլ մարզերից<sup>2</sup>:



Լայատակային կլաստերային ռազմավարության հիմնական բնութագրիչը պահանջարկի և մատակարարումների ոլորտում հստակ մշակված միջոցառումների բազմակողմանի աջակցությունն է: Այդ քաղաքականությունը նպաստում է պետական և տնտեսական կառույցների սերտ համագործակցությանը, ինչի շնորհիվ Արդյունքում տնտեսական միավորները զբաղվում են նաև ավանդական պետական հարցերով, օրինակ՝ միջազգային ստանդարտների (չափանիշների) համապատասխան առևտրային համաձայնագրերի վերաբերյալ ազգային իրավական ակտերի ընդունումը:

Ի տարբերություն կոոպերացիայի, որը միանման գործունեությամբ զբաղվող տնտեսությունների համագործակցություն է, կլաստերը ընդգրկում է որևէ արտադրատեսակի արտադրության կամ ծառայության մատուցման կազմակերպման համար պահանջվող կրթական, սպասարկող և օժանդակ, արտադրող, իրացում ապահովող կազմակերպությունների համախումբ (փունջ): Կլաստերը չի ձևավորվում ինքնաբերաբար: Դրա գոյացումը հնարավոր է միայն այնտեղ, որտեղ առկա են անհրաժեշտ գործոններ, միջոցներ և կոմպետենցիաներ: Կլաստերը, որպես տարածաշրջան, ըստ Պորտերի, ունի հստակ և վճարող մրցակցային առավելություններ այլ տարածաշրջանների համեմատ՝ ի շնորհիվ բարձր արտադրողականության, նորամուծությունների և գործարարության նոր ձևերի զարգացման: Կլաստերի կիրառումը մեր հանրապետությունում հնարավորություն կտա հատկապես ուժեղացնել *գիտության և արտադրության կապը*: Կլաստերների զարգացումը քննարկվել է նաև ՀՀ խորհրդարանում, որտեղ 2016թ. հոկտեմբերի 20-ին կրթության և գիտության նախարար Լ.Լուս Մկրտչյանը առաջարկել է կազմակերպել 2 գիտարդյունաբերական կլաստեր: Կլաստերներից մեկում կհավաքվեն ինժեներատեխնիկական ինստիտուտները, ինչպես նաև տեխնոպարկերը: Երկրորդը կլինի համալսարանների բազայի վրա և կենտրոնացած կլինի բնական գիտությունների վրա:

Դիտարկելով նորարարական կլաստերները, դրանց գործարկման և հետագա զարգացման գործընթացները՝ կապված զարգացած առաջատար պետությունների փորձի հետ, կարևորվում է ել անհրաժեշտ է վերլուծել վերջիններիս տեղայնացման հնարավորությունները ՀՀ տնտեսությունում: Միաժամանակ՝ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել «տարածքի զարգացման բացարձակ և համեմատական առավելությունները, բացահայտել սոցիալ - ժողովրդագրական հնարավորությունները, երկրի տնտեսության ճյուղային կառուցվածքի ու տարածական զարգացման կազմակերպման առանձնահատկությունները և առկա հիմնախնդիրները»:

Այս առումով հատկանշական է այն, որ թեև տնտեսության զարգացմանը նպաստող այս տարբերակը ոչ այնքան երկար ժամանակ է, որ մուտք է գործել Հայաստան, սակայն արդեն հասցրել է ուսումնասիրվել, վերլուծվել, ինչպես նաև կիրառվել տնտեսության տարբեր ոլորտներում: 2011թ. կազմավորված «Հայկական միդ» ԲԲԸ՝ Տվոյի, Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերում կազմակերպվել և ներկայում գործում են գյուղատնտեսական կլաստերներ, ինչպես նաև ՀՀՏՀ հետազոտական խմբի կողմից 2014թ. մշակված «Տարածական զարգացման հնարավորությունները» զեկույցում ներկայացված է Վայոց Ձորի մարզում գինեգործական կլաստերը<sup>3</sup>:

Այսպիսով՝ հիմնվելով փորձնական և գիտական մեթոդների վրա մշակել ենք «Կաթնամթերքի արտադրության» կլաստեր, որը ցանկության դեպքում կարելի է տեղայնացնել ՀՀ ցանկացած մարզում (տե՛ս գծապատկերը):

<sup>2</sup> Վ. Ամիրխանյան, Արարարական կլաստերների Երկրում և ՀՀ տնտեսությունում դրանց գործարկման հնարավորությունները, Երևան, 2016  
<sup>3</sup> Հետազոտական խումբ Կ. Գրիգորյանի ղեկավարությամբ, Տարածական զարգացում, Երևան, 2014

Մշակված կլաստերի հիմնական նպատակը կաթնամթերքի արտադրության զարգացումն է ՀՀ-ում: Գծապատկերում ներկայացված է դրա հիմնական մասնակիցների կազմը՝ արտադրողներ, մատակարարներ, սպառողներ, գիտահետազոտական կազմակերպություններ, որոնք մշակում են անհրաժեշտ տնտեսական ու սոցիալական ենթակառուցվածքներ և ապահովում կլաստերի համակարգային գործունեությունը:

*Ներկայացվել է 27.07.2017թ.  
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.*